Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Սոփիա Մարտիրոսեանցի անունով Շամախու Հայոց եկեղեցուն զարդեր և սրբոց պատկերներ նուիրելու առթիւ։ 28 դեկտեմբերի թ. 1847։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Աղաֆան Օհանեանցի անունով Դանձակի Հայոց եկեղեցու և ծխական դպրոցի բարեզարդութեան համար ծախսած 1077 ռ. առթիւ։ 28 դեկտեմբ. թ. 1848։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Վարդանեան ամուսիններուի անունով Հին-Նախիջևանի եկեղեցուն զանգ, բրոնզեայ ջահ և այլ նուիրաբերութեանց առթիւ։ 28 դեկտեմբ. թ. 1849։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան օր. Եղիսաբէթ Հայրապետեանցի անունով ս. Էջմիածնի Գայիանէի վանքի նորոգութեան նուիրած մի հազար ռուբլու առթիւ։ 28 դեկտեմբ. թ. 1866։

---

## ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 693 նոյեմբեր 28/29. Սինոդը որոշեց պատուիրել Մայր Աթոռի կալուածոց կառավարիչ պ. Լ. Տէր Աւետիքեանին Հաղբատ, Սանահին և Հաղարծին վանքերի եկամուտները ստանալ և յանձնել նոյն վանքերի վանահայրերին. այլ և պատուիրել Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարչին Սանահնի վանքի կալուածների և յատկապէս էլէկտրական կայարանի մասին ճիշտ հաշիւ ներկայացնել Սինոդին մինչև առաջիկայ դեկտ. 20-ը՝ սկսած վանքի կառավարութիւնն իւր հսկողութեան տակ առնելու օրից։

Թ. 694 28/29 նոյեմբերի. Սինոդը որոշեց թոյլ տալ Մայր Աթոռի վանական կառավարութեանը Վաղարշապատցի Թադուհի Սաֆարեանի Մ. Աթոռին նուիրած տունը հրապարակական աճուրդախօսութեամբ վաճառել բնիկ Վաղարշապատցիներից աւելի գին տուողին և կատարած աճուրդախօսութեան արդիւնքը ներկայացնել Սինոդիս ի հաստատութիւն։

Թ. 696 28/29 Նոյեմբերի. Սինոդը՝ լսելով Ալաշկերտի հայ հասարակութեան այս տարուայ յուլիս 17-ի խնդիրը յանուն Նորին Վեհափառութեան, որոշեց. նախ՝ որովհետև յիշեալ 16387 ռ. 50 կ. գումարը հանգանակուած է Բագրեւանդի, Ալաշկերտի և Բայազէտի գաւառների հայ գաղթականների կարիքների համար և Սինոդս 1879 թ. դեկտ. 10-ի օրագրի համաձայն այդ գումարի տոկոսներն ուղարկել է Կ. Պոլսի պատրիարքարանին ի գործադրութիւն, ուստի Ալաշկերտցիների խնդիրը յանուն Նորին Վեհափառութեան մերժել, բացատրելով նրանց, որ այդ գումարից օգտուելու իրաւունք ունի յիշեալ երեք գաւառների հայ ազգաբնակութիւնը. և երկրորդ՝ որովհետև, ինչպէս երևում է Սինոդիս դրամաւոր մատեաններից. 16387 ռ. 50 կ. գումարի տոկոսներից 1906—1910 թ. թ. ընթացքում ուղարկուել է Կ. Պոլսի պատրիարքին 2302 ռ. 50 կ., իսկ պատրիարքարանը յայտնել է Միացեալ Ընկերութեան, թէ այդ գումարը չէ ստացել, այլ մնացել է Սինոդում, ուստի բացատրութիւն պահանջել Կ. Պոլսի պատրիարքից, թէ ինչ է եղել 2302 ռ. 50 կ. գումարը։

Թ. 699 30 Նոյեմբերի. Սինոդը՝ լսելով Վաղարշապատցի Յարութիւն Շահոյեանցի խնդիրը, որով ցանկութիւն է յայտնել վանքապատկան տունը կապալով վերցնել, որոշեց. թոյլ տալ Մ. Աթոռի վանական կառավարութեանը հրապարակի վերայ գտնուած վանքապատկան տունը տալ վարձով Յարութիւն Շահոյեանին տարեկան 300 ռուբլով, սկսած առաջիկայ 1913 թ. յունուարի 1-ից մինչև 1917 թ. օգոս. վերջը։ Այս մասին Յարութիւն Շահոյեանի հետ կապել պայման, որի իսկականը ներկայացնել Սինոդիս։

Թ. 716 7/8 դեկտ. Սինոդը՝ լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի տարեայս ապրել 2-ի թ. 1148 յայտարարութիւնը, որով խնդրում է Ախալքալակ քաղաքի բնակիչ Տիգրան Տօնականեանցին թոյլ տալ քահանայ ձեռնադրելու Աբասթուման ամարանոցի ծխականների համար, որոշեց.

թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Տիգրան Տօնականեանին և յանձնարարել թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել նրան քահանայ Աբասթումանի համար։

Թ. 717 7/8 դեկտ. Սինոդը՝ լսելով հոգևոր գործերի Դեպարտամենտի տարեսոյս նոյեմբեր 11-ի թ. 10551 գրութիւնը, որով յայտնում է, որ ներքին գործերի պ. նախարարը իւր խորհրդի եզրակացութեան համաձայն թոյլ տուեց ընդունել Կոկանդի հայ աղօթատան օգտին Բէկլար Քոչարեանի, Արտաշէս Վաչեանի և Գրիգոր Տ. Սրապիոնեանցի նուիրած հողամասը իւր բոլոր շինութիւններով 4000 ռ. գնահատութեամբ,—որոշեց. ուղարկելով Դեպարտամենտի թ. 10551 գրութեան պատճէնը և վերադարձնելով կալուածագրերը՝ պատուիրել Ատրպատականի Կոնսիստորիային կարգադրել ընդունելու յիշեալ կալուածը Կոկանդի հայոց եկեղեցու օգտին։

Թ. 719 10/11 դեկտ. Սինոդը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմի առաջնորդի 1910 թ. նոյեմ. 23-ի թ. 507 յայտարարութիւնը, որով խնդրում է թեմի հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան միջնորդութեան համաձայն թոյլ տալ վաճառելու Խալիպեան դպրոցին պատկանող շինութիւնները, որոնք ներկայ դրութեամբ աւելորդ ծախսեր են պահանջում, որոշեց. Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմական դպրանոցի հոգաբարձութեան միջնորդութեան համեմատ խնդրել ներքին գործերի պ. նախարարին կարգադրել թոյլ տալ վաճառելու Խալիպեան դպրոցի շէնքը, որ արժէ 5000 ռ. աւելի։

Թ. 722 10/11 դեկտ. Սինոդը որոշեց. պատուիրել Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմի առաջնորդին կարգադրել կանոնաւոր կերպով ցուցակագրել Բախչիսարայի հայոց եկեղեցու շարժական և անշարժ գոյքը, ձեռագիր և հին մատեանները ուղարկել ռ. Էջմիածին պահելու Մ. Աթոռի մատենադարանում համաձայն ի Տէր հանգուցեալ Մատթէոս II կաթուղիկոսի 1909 թ. հոկտ. 21-ի շրջաբերական

կոնդակի. ընտրել տալ մշտական երեսփոխան՝ անկրուստ պահպանելու և հսկելու եկեղեցու գույքին և հոգ տանել ծխականների հոգևոր պէտքերը կանոնաւոր բաւարարութիւն տալու վերաբերմամբ։ Կատարածի մասին տեղեկութիւն տալ Սինոդիս՝ ներկայացնելով եկեղեցու գույքի ցուցակների պատճէնները։

Թ. 723 10/11 դեկտ. Սինոդը՝ լսելով Իգդիր գիւղի եկեղեցու վերանորոգութեան համար Երևանի պ. նահանգապետի այս տարուայ մայիս 2-ի թ. 1304 և սեպտ. 21-ի թ. 2641 գրութիւնները, որոշեց. թոյլ տալ Իգդիրի հայոց եկեղեցին վերաշինել հաստատուած յատակագծով, որի համար հրաման տալ Երևանի Կոնսիստորիային պատշաճ կարգադրութիւն անելու համար։

Թ. 728 11/11 դեկտեմբ. Սինոդը՝ լսելով հոգևոր գործերի Դեպարտամենտի այս տարուայ հոկտ. 3-ին թ. 8980 գրութիւնը, որոշեց. յայտնել հոգևոր գործերի Դեպարտամենտին, թէ Հայոց եկեղեցիներում գանձանակ ժողովում է շրջեցնելով հանդիսաւոր տօներին յօգուտ ս. Էջմիածնի և ս. Երուսաղէմի վանքերի և իւրաքանչիւր եկեղեցու և եկեղեցու պաշտօնեաների՝ հնաւանդ սովորութեամբ առանց յատուկ թոյլտուութեան համաձայն XI հ. I մ. 1216, 1217, և 1253 յօդ., իսկ յատուկ դէպքերում, ինչպէս օրինակ Կարմիր Խաչի ընկերութեան, պատերազմի դաշտում ընկած զինուորների ընտանիքների օգտին և այլն գանձանակ է ժողովում եկեղեցիներում շրջեցնելով կնքած անշարժ դրամատուփեր Սինոդի շրջաբերական կարգադրութեամբ։

Թ. 732 12/13 դեկտ. Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ սեպտ. 25-ի թ. 7648 յայտարարութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունելու Պարոյր Ամանասեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան սարկաւագ Երևանի ս. Սարգիս եկեղեցու համար։

*Թ. 742 14 դեկտ. Սինոդը՝ լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի տարուոյս ապրելի 2-ի թ. 1147 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Տիգրան Ամիրջանեանին և յանձնարարել թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել նրան երկրորդ քահանայ Ուզունթալա և Լալի գիւղերի համար։*

*Թ. 752 դեկտ. 17. Սինոդը՝ լսելով Կառավարիչ Սենատի պետական յանցանքների* (госуд. преступл.) *վերաբերեալ գործերի առանձին Ատեանի դատախազի պաշտօնակատարի թ. 1152 դեկտ. 6-ի գրութիւնը՝ որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց Կոնսիստորիային կարգադրել զրկել Աշոտ քահանայ Տէր-Իսրայէլեանին քահանայական կարգից և իսպառ հոգևոր կոչումից և կատարածի մասին տեղեկութիւն տալ Սինոդիս։ Այս մասին յայտնել և Սինոդիս պ. Պրօկուրորին։*